ԲՄԿ ՊՈՒՀ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի ինստիտուտի տնօրեն
Մ.Ա. Քաղաշյան

«04» հուլիսի 2025 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Իրավունքի տեսության և Սահմանադրական իրավունքի

Հեղինակ(ներ)՝ ի.գ.թ., դոցենտ, Ստեփանյան Հ.Ա.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Սահմանադրությամբ նախատեսված մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակը

Մագիստրոսի կրթական ծրագիր՝ 042101.02.7 «Սահմանադրական իրավունք, պետության և իրավունքի տեսություն»

Դասիչ մասնագիտություն՝042101.00.7 Իրավագիտություն

ԲՄԿ ՊՈՒՀ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան

1. Ներածություն

«Սահմանադրությամբ նախատեսված մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակը» դասընթացը մագիստրատուրայի ուսումնական ծրագրի առարկաներից է: Այն բարձրագույն իրավաբանական կրթության առարկաների համակարգում զբաղեցնում է առանցքային տեղ:

«Սահմանադրությամբ նախատեսված մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակը» դասընթացի շրջանակում ուսանողները կուսումնասիրեն ՀՀ Ազգային Ժողովի կազմակերպման կարգն ու իրավասությունը, ՀՀ նախագահի, ՀՀ կառավարության, ՀՀ դատական իշխանության սահմանադրաիրավական կարգավիճակը, դրանց տեղը և դերը պետական իշխանության մարմինների համակարգում, դատախազության, տեղական ինքնակառավարման մարմինների, անկախ պետական մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակը:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում նշված մարմինների կողմից ընդունվող ակտերի ընդունման կարգին և բնույթին:

Դասընթացի նպատակը և խնդիրները: Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ ՀՀ Ազգային Ժողովի, ՀՀ նախագահի, ՀՀ կառավարության, ՀՀ դատական իշխանության և դատախազության, ՀՀ Սահմանադրական արդարադատության, տեղական ինքնակառավարման մարմինների ինստիտուտների վերաբերյալ:

Դասընթացի խնդիրները:

Դասընթացի շրջանակներում առաջադրվում են հետևյալ խդիրները.

- ✓ստացած գիտելիքների հիման վրա իրականացնել դասընթացի շրջանակներում ուսումնասիրվող սահմանադրական մարմինների կարգավիճակի համեմատական վերլուծություն՝ կապված սահմանադրական փոփոխությունների հետ
- ✓ձևավորել մասնագիտական արհեստավարժություն,
- ✓ձևավորել սահմանադրությամբ նախատեսված մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակի հիմնախնդիրները վերլուծելու, և այդ խնդիրների լուծմանն ուղղված առաջարկներ ներկայացնելու կարողություն:

2.1. Կրթական վերջնարդյունքները: Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

իմանա՝

- ՀՀ Ազգային Ժողովի կազմավորման կարգն ու իրավասությունը,
- ՀՀ նախագահի սահմանադրաիրավական կարգավիճակը պետական կիշխանության մարմինների համակարգում,

- ՀՀ կառավարության կազմավորման կարգը, կառուցվածքը և իրավասությունները,
- դատական իշխանության մարմինների համակարգը, կազմակերպման և գործունեության սկզբունքները,
- Սահմանադրական դատարանի իրավական կարգավիճակը, կազմավորման կարգն ու անկախության երաշխիքները,
- դատական սահմանադրական վերահսկողության ձևերը, ՍԴ լիազորությունները,
- ՀՀ դատախազության կազմակերպման և իրավասության սահմանադրական հիմունքները,
- ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակը,
- անկախ պետական մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակի առանձնահատկությունները:

կարողանա՝

- Հիմնավորել իր տեսակետը սահմանադրությամբ նախատեսված մարմինների իրավասության, կազմակերպման և գործունեության վերաբերյալ,
- Իրավական հարցերի վերաբերյալ տալ մասնագիտական գնահատական.
- Կիրառել ձեռք բերված գիտելիքները գործնականում.
- Ինքնուրույն կատարելագործել մասնագիտական հմտությունները՝ հաշվի առնելով օրենսդրության, տեսության և պրակտիկայի զարգացումը.

ունակ լինի՝

- Վերլուծել սահմանադրությամբ նախատեսված մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակին վերաբերող նորմերը.
- Առաջադրվող խնդիրների շուրջ բանավեճերի և քննարկումների մասնակացնել, սեփական կարծիքն իրավաբանորեն հիմնավորել.
- Վեր հանել նշված մարմինների կազմակերպման և գործունեության հիմնախնդիրները:

2.2. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)

Դասընթացը ներառված է «Հիմնական մասնագիտական դասընթացների կրթաբլոկում» 4 ակադեմիական կրեդիտ (144 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 1 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում:

Ուսումնական	Ամբողջը,	Բաշխում ըստ կիսամյակների

աշխատանքների տեսակները	**ակ. ժամ.**	**1 Կիս**	**2 Կ**	**3 Կ**	**4 Կ**	**5 Կ**	**6 Կ**
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**
Ըստ կիսամյակի ընդհանուր դասընթացի ուսուցման ծանրաբեռնվածությունը	**144**	**144**					
Լսարանային պարապմունքներ:	34	**34**					
Դասախոսություններ	18	18					
Լաբորատոր աշխատանքներ							
Սեմինարներ	**16**	**16**					
Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	**74**	**74**					
քննություններին նախապատրաստում							
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**քննություն**	**քննություն**					

2.3. Առարկայի ծավալը՝ 144 ժամ, կրեդիտ՝ «4» ECTS:

2.4. Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	**Ընդամենը**	**Դասախոսու-թյուններ**	**Գործնական / սեմինար պարապմունքներ**
1	**2=3+4**	**3**	**4**

Թեմա 1. ՀՀ Ազգային Ժողովի սահմանադրաիրավական կարգավիճակը	**8**	**4**	**4**
Թեմա 2. ՀՀ նախագահի սահմանադրա-իրավական կարգավիճակը	**4**	**2**	**2**
Թեմա 3. ՀՀ կառավարության սահմանադրա-իրավական կարգավիճակը	**4**	**2**	**2**
Թեմա 3. Դատարանները և Բարձրագույն դատական խորհուրդը	**6**	**4**	**2**
Թեմա 4. Դատախազությունը և քննչական մարմինները	**4**	**2**	**2**
Թեմա 5. ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակը	**4**	**2**	**2**
Թեմա 6. Անկախ պետական մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակի առանձնահատկությունները	**4**	**2**	**2**
Ընդամենը	**34**	**18**	**16**

3. Դասընթացի թեմաները եւ ծավալները:

Թեմա 1. ՀՀ Ազգային Ժողովի սահմանադրաիրավական կարգավիճակը

Ազգային Ժողովը՝ որպես ՀՀ բարձրագույն ներկայացուցչական, օրենսդիր մարմին: ՀՀ Ազգային Ժողովի կազմակերպման կարգն ու կառուցվածքը: Ազգային ժողովի իրավասությունը: Ազգային ժողովի վերահսկողական լիազորությունները: Օրենսդրական գործընթացը: Ինքնավար մարմիններ:

Թեմա 2. ՀՀ նախագահի սահմանադրաիրավական կարգավիճակը

Հանրապետության նախագահի իրավական կարգավիճակը պետական իշխանության մարմինների համակարգում: Հանրապետության նախագահի ընտրության և լիազորությունների դադարման հիմքերն ու կարգը: Հանրապետության նախագահի գործառույթներն ու լիազորությունները:

Հանրապետության նախագահի ակտերը: Հանրապետության նախագահի գործունեության ապահովումը

Թեմա 3. ՀՀ կառավարության սահմանադրաիրավական կարգավիճակը
Կառավարության տեղը գործադիր իշխանության համակարգում: Կառավարության կազմը և կառուցվածքը: Կառավարության կազմավորումը: Կառավարության ծրագրի հաստատումը և տարեկան զեկույցը ԱԺ: Կառավարության պատասխանատվությունը և վստահության հարցը: Իրավասությունների բաշխումը Կառավարության մեջ: Կառավարության նիստերը և որոշումները: Վարչապետի ակտերը: ՀՀ պետական կառավարման տարածքային կազմակերպումը:

Թեմա 4. Դատարանները և Բարձրագույն դատական խորհուրդը
Դատական համակարգի զարգացման փուլերը: ՀՀ դատական համակարգը: Բարձրագույն դատական խորհուրդը որպես դատարանների և դատավորների անկախությունը երաշխավորող անկախ պետական մարմին: Սահմանադրական դատարանի տեղը դատական համակարգում: Սահմանադրական դատարանի իրավական կարգավիճակը, կազմավորման կարգը և անկախության երաշխիքները: Սահմանադրական դատարանի լիազորությունները: Սահմանադրական դատարանի ակտերը:

Թեմա 5. Դատախազությունը և քննչական մարմինները
Դատախազության կազմավորման և գործունեության կարգը: Դատախազության իրավասությունը: Քննչական մարմինները

Թեմա 6. ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակը
Տեղական ինքնակառավարման հասկացություն: Տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման կարգը և իրավասությունը:

Թեմա 7. Անկախ պետական մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակի առանձնահատկությունները
Մարդու իրավունքների պաշտպանի սահմանադրաիրավական կարգավիճակը: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանադրական կարգավիճակը, կազմավորման կարգն ու իրավասությունը: Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի սահմանադրական կարգավիճակը, կազմավորման կարգն ու իրավասությունը: Հաշվեքննիչ պալատի սահմանադրական կարգավիճակը, կազմավորման կարգն ու իրավասությունը: Կենտրոնական բանկի սահմանադրական կարգավիճակը, կազմավորման կարգն ու իրավասությունը:

4. Գրականության ցանկ

Հիմնական՝

1. Խորհրդարանական կառավարման ձևի արդի հիմնախնդիրները/, կոլեկտիվ մենագրություն/Վ.Ստեփանյան, Հ.Ստեփանյան, Հ.Կեսոյան, Երևան, Արտագերս, 2020:
2. **Դանիելյան Գ.;** Իրավաստեղծ գործունեություն և իրավաբանական տեխնիկա, ուսումնական ձեռնարկ, Երևան 2021:
3. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք /պատ. Խմբագիր պրոֆ. **Ն. Ա. Այվազյան**/, «Երևանի համալսարան» հրատ., մաս 1 Երևան, 2016:
4. **Հակոբյան Հ.** Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Երևան 2007թ.:
5. Այվազյան Ն., Այվազյան Ա., Սահմանադրության էությունը և բովանդակությունը, Երևան, 2005:
6. Авакьян С.А. Конституционное право России: в 2-х Т. – М., 2018.
7. Баглай М.В. Конституционное право РФ: Учебник для вузов, 13-изд. - М, 2019. Конституционное право РА, Учебник, под. Ред. Айвазяна Н.А., Ереван, , 3-изд 2008г. (на арм. яз.)
8. Стрекозов, В. Г. Конституционное право : учебник для среднего профессионального образования / В. Г. Стрекозов. — 7-е изд., перераб. и доп. — Москва : Издательство Юрайт, 2019
9. Виноградов В. А., Мазаев В. Д., Масленникова С. В. ; Под общ. ред. Виноградова В.А.- КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО РФ В 2 Ч. ЧАСТЬ 2 4-е изд., пер. и доп. Учебник для академического бакалавриата-М.:Издательство Юрайт,2019
10. Комментарий к Конституции РА овет.ред. Арутюнян Г.Г., Вагаршакян С.А., Ереван 2010г. Авакьян С.А. Конституционное право России: Учебно-методическое пособие для семинарских занятий.- М, 2001.

Լրացուցիչ՝

1. **Ստեփանյան Հ.** Պառլամենտի ձևավորումը և դերը ժողովրդավարության կայացման գործում: «Գլաձոր» 30, համալսարանի հոբելյանական գիտական նստաշրջանի հոդվածների ժողովածու, Երևան, «Վան Արյան» 2020, 63-73 էջեր:
2. Մ. Մուրադյան Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունք (Ընդհանուր մաս): Եր. 2011.
3. **Черкасов А.И.** Президенциализм и парламентаризм в странах современного мира // Государство и право.- 2012.- № 9.-С.35-43.
4. Автономов А.С. Констутиционное (государственное) право зарубежных стран. М., 2005.

5. Баглай М.Б. Конституционное право Российской Федерации. М., 2005.
6. Авакьян С.А. Констутиционное право. Энциклопедический словарь. Изд."Норма", М.,2000.
7. **Stepanyan H.,** The constitutional status of the National Assembly in the parliamentary government system of the Republic of Armenia, Proceedings of the 2nd International Scientific Conference on «Contemporary Problems of Management» dedicated to the 25th anniversary of the Public Administration Academy of the Republic of Armenia, Yerevan, Public Administration Academy of the Republic of Armenia, 2019, p. 172-181

բ) Նորմատիվ իրավական ակտեր

1. 1995թ. ՀՀ Սահմանադրություն՝ 2005 և 2015 թ. փոփոխություններով:
2. ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ օրենք (ընդունված 2016թ. դեկտեմբերի 16-ին):
3. ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենք (ընդունված 2016թ. մայիսի 25-ին):
4. Կուսակցությունների մասին ՀՀ սահմանադրական օրենք (ընդունված 2016թ. դեկտեմբերի 16-ին):
5. Հանրաքվեի մասին սահմանադրական օրենք (ընդունված 2018թ. մարտի 23-ին):
6. Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենք (ընդունված 2018թ. մարտի 21-ին):
7. Հանրային ծառայության մասին ՀՀ օրենք (ընդունված 2018թ. մարտի 23-ին):
8. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին ՀՀ օրենք (ընդունված 2016թ. դեկտեմբերի 16-ին):
9. Միջազգային պայմանագրերի մասին ՀՀ օրենք (2018 թվականի մարտի 23-ին):

գ)Ինտերնետային կայքեր

1. www.arlis.am
2. www.parliament.am:
3. www.concourt.am

5. Հարցեր եւ առաջադրանքներ ուսանողների ինքնուրույն աշխատանքի համար

Հարցաշար

1.Ազգային Ժողովը՝ որպես ՀՀ բարձրագույն ներկայացուցչական, օրենսդիր մարմին:

2.ՀՀ Ազգային Ժողովի կազմակերպման կարգն ու կառուցվածքը:

3. Ազգային ժողովի իրավասությունը:

4. Ազգային ժողովի վերահսկողական լիազորությունները: Օրենսդրական գործընթացը:
5.Ինքնավար մարմինները:
6.Հանրապետության նախագահի իրավական կարգավիճակը պետական իշխանության մարմինների համակարգում:
7.Հանրապետության նախագահի ընտրության և լիազորությունների դադարման հիմքերն ու կարգը:
8.Հանրապետության նախագահի գործառույթներն ու լիազորությունները:
9.Հանրապետության նախագահի ակտերը:
10. Հանրապետության նախագահի գործունեության ապահովումը:
11. Կառավարության տեղը գործադիր իշխանության համակարգում:
12. Կառավարության կազմը և կառուցվածքը: Կառավարության կազմավորումը:
13. Կառավարության ծրագրի հաստատումը և տարեկան զեկույցը ԱԺ:
14. Կառավարության պատասխանատվությունը և վստահության հարցը:
15. Կառավարության նիստերը և որոշումները: Վարչապետի ակտերը:
16. ՀՀ պետական կառավարման տարածքային կազմակերպումը:
17. Դատական համակարգի զարգացման փուլերը: ՀՀ դատական համակարգը:
18. Բարձրագույն դատական խորհրդի կազմավորման և գործունեության կարգը:
19. Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունները:
20. Սահմանադրական դատարանի տեղը դատական համակարգում:
21. Սահմանադրական դատարանի իրավական կարգավիճակը, կազմավորման կարգը և անկախության երաշխիքները:
22. Սահմանադրական դատարանի լիազորությունները և ՍԴ դիմող անձանց շրջանակը:
23. Սահմանադրական դատարանի ակտերը:
24. Դատախազության իրավասությունը:
25. Տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման կարգը և իրավասությունը:
26. Մարդու իրավունքների պաշտպանի սահմանադրաիրավական կարգավիճակը:
27. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանադրական կարգավիճակը, կազմավորման կարգն ու իրավասությունը:
28. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի սահմանադրական կարգավիճակը, կազմավորման կարգն ու իրավասությունը:
29. Հաշվեքննիչ պալատի սահմանադրական կարգավիճակը, կազմավորման կարգն ու իրավասությունը:
30. Կենտրոնական բանկի սահմանադրական կարգավիճակը, կազմավորման կարգն ու իրավասությունը:

6. Ստուգումների անցկացման ձեւը եւ գնահատման չափանիշները:

Խմբային քննարկում. Նպատակը՝ մտքերի փոխանակում կոնկրետ առաջադրված տեսական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գնահատման չափանիշները՝ տեսական պատրաստվածություն, հղումներ հեղինակներին, սեփական կարծիքի հիմնավոր եւ տրամաբանական փաստարկվածություն, ակադեմիական ակտիվություն, գիտական էթիկայի պահպանման կարողություն:

Ելույթներ ըստ թեմայի. Նպատակը՝ թեմայի կամ հարցի խորացված ուսումնասիրում:

Գնահատման չափանիշները՝ պատասխանի տրամաբանական կառուցում, տեսական եւ կիրառական գիտելիքների համադրում, օրինակներ բերելու ունակություն, տեսակետների պատճառաբանվածություն:

Ստուգարք. Նպատակը՝ ստուգել ուսանողների գիտելիքները եւ ելույթների վերլուծության ունակությունը ստացված գիտելիքերի արդյունքում: